

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ Մարտակերտի շրջանի ներքոհիշյալ դպրոցների ուսուցիչների թափուր տեղերի համար.

Հաթերքի մ/դ	Ֆիզկուլտուրա 12ժ., երաժշտություն 10
Վաղուհասի մ/դ	օտար լեզու (անգլերեն) 20ժ.
Վ. Հոռաթաղի մ/դ	Ֆիզկուլտուրա 23ժ., դասվար 16ժ.
Թալիշի մ/դ	Ֆիզկուլտուրա 14ժ., դասվար 20ժ., աշխարհագրություն 8ժ.
Մոխրաթաղի մ/դ	դասվար 20ժ.
Չլդրանի մ/դ	կենսաբանություն 10ժ.
Ճանկաթաղի մ/դ	Ֆիզիկա 15ժ.
Ն. Սեյսուլանի մ/դ	դաստիարակ 1 հաստիք
Հար-Գոմերի մ/դ	մաթեմատիկա 11ժ.
Մաղավուզի մ/դ	Ֆիզիկա 13ժ., մաթեմատիկա 18ժ., ինֆորմատիկա 6ժ
Քուլատակի մ/դ	քիմիա 8ժ., կենսաբանություն 10ժ., ֆիզկուլտուրա 17ժ., շախմատ 6ժ.
Կուսապատի մ/դ	մաթեմատիկա 6ժ.
Մատաղիսի մ/դ	հայոց լեզու 13ժ., աշխարհագրություն 8ժ., պատմություն 6ժ., ՀԵՊ 7ժ., մաթեմատիկա 15ժ., ինֆորմատիկա 6ժ., դասվար 20ժ., ֆիզկուլտուրա 23ժ.
Պողոսագոմերի մ/դ	աշխարհագրություն 8ժ., տեխնոլոգիա
Կիչանի մ/դ	քիմիա 11ժ., կենսաբանություն 11ժ.
Զարդախաչի հ/դ	քիմիա - կենսաբանություն 10ժ., օտար լեզու (անգլերեն) 8ժ.
Հայկաջուրի հ/դ	Ֆիզիկա 6ժ.
Գառնաքարի հ/դ	Ֆիզկուլտուրա 12ժ.
Ծնակահողի հ/դ	Ֆիզկուլտուրա 9ժ.
Շահմասուրի հ/դ	օտար լեզու (գերմաներեն) 8ժ., պատմություն 7ժ.
Կարմիրավանի հ/դ	օտար լեզու (անգլերեն) 10ժ.
Աղաբեկավանջի հ/դ	ռուսաց լեզու 9ժ., պատմություն 7ժ., ֆիզկուլտուրա 6ժ., ՆԶՊ 0.5 հաստիք

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ 25-26 և 2014թ 23 համարներում, ինչպես նաև տեղադրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև ս.թ. օգոստոսի 18-ը՝ ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան օգոստոսի 21-25-ը ընկած ժամանակահատվածում՝ տեղը, ժամը և այլ տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց: